


THE DICKRIS PUBLISHING CO. NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 47

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1898

ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Թուլացուցիչ ու տաք օրերը անցան: Նիւ Եօրքի Հայ գաղութը կը վերակարգի իր ազգային ժողովները: Օգրը ու Հայու ազգային կեանքը իրարու հետ հաշտ չեն: Հեղձեցուցիչ օրերուն տեղական ազգային կեանքին մէջ զէրօէն շատ վար սառնութիւն, մինչդեռ սառնամանիքի գիշեր մը կը յիշեմ երբ սրահի մը մէջ երկու կուսակցութիւններ աթոռամարտութեան փորձեր ըրին: Հեռուէն թերեւս կարծողներ ըլլան թէ տեղական սովորութեան համեմատ ամուսնային օրերուն քաղաքի կեանքէն կը հեռանանք ծովեզերեայ օդատունամուսնայիններու արատ գեփիւն շնչելու, ու անոր համար վազանձ մը ընել ստիպուած ենք ազգ. կեանքէն բայց ես ամբողջ գաղութին մէջ երկու բարեբաւտի կէտեր կը ճանչնամ որոնք այս գերագոյն շահոյքը վայելցին այս ամառը, անոնք այլ ժողովուրդներու գաղութներ են: Իսկ մեզ համար ամառը դժոխք էր, հոտած գործարանները ամառները մէկ մէկ անխաղաղ գերեզմաններ են, ու մենք անոնց մէջ քրտնաթաթախ ասնոյնեցանք: Ամառանոց չը գնացինք թէ երայց ազգ. վազանձը ըրինք: Կոչք պահպան ալ չը պահողն այլ Չատիկը կընէ:

Վազանձի աւարտումի զանգակը Ե. Թ. Միութիւնը հնչեցուց անցեալ Շարաթ գիշեր Միութեան ժողովով մը լաւ ըրած էր վարչութիւնը, թէ եւ անգիտակցօրէն, որ աւելի խեղկատակ ժողով մը սարքած էր քան լուրջ ժողով մը: Արձակուրդէն վերադարձող սառնողներուն մէկինմէկ չեն խորհեցներ դժուար դասերով:

Ժողովին օրակարգը. — առաջին կէս աստուածարան աստեղագիտութեան քննարկումները ու բոլորն ալ զաւեհչանք էին: Վարչութեան մէջէն անդամներ անոյ օրոնք ժողովը բացուելէ առաջ երգում պատառ կը լլային թէ նոր պաշտօն չը պիտի աւանդեն, ու քիչ մնաց որ իրենք զիրենք հայհոյէին: Բայց երբ ընտրելիներու ցանկը պատրաստուելու եկաւ կարգը, հասկցուեցաւ որ անդամները մի եւ նոյն պաշտօնը առնելու արամադիր չէին, այլ փափաքող էին պաշտօնունուն բարձրացումին: Օրինակի համար Պ. Ազատ թանգարանագիտութեան մինչ փոխ-աստեղագիտութեան բարձրացաւ ու փոխ թանգարանագիտան ալ մինչեւ ընդհանուր բարատեղարութեան ելաւ, առանց ըսելու թէ ինք պարզ նամակ մը գրելու կարող չէ: Չի խնդանք. շատ տիրինք որ այս շրջանին ալ Թ. Միութեանէն երբէք բան յուսալու չենք, քանի որ պաշտօնագիտութիւններ կըան անոր վարչութեան մէջ քան հիմնական փոփոխութիւն:

Թուրք կառավարութիւնն ալ պաշտօնագիտութիւն չառ կընէ: \* \* \* Թանգարանի այս անմխիթար ու յետադէմ կացութեան առջեւ մեծ

ուրախութիւնով մըն է որ կողմունք ու կը քաջալերենք նորակազմ գերասանաց խումբը, որն այս ձմեռ քանի մը ներկայացուցինք տալ կը խոստանայ մեզ, ան ալ ի նպաստ Զէյթունի, որբերու և այլն:

Հարկ կ'այ հրաւէր կարգալու աւելն անկեղծ ու կարող հայ երիտասարդի այս օգտակար կազմակերպութեան միանալու համար:

Լսարանի վարչութիւնն ալ շատ շրջահայեաց ուղղութեան մը կը հետեւի այս տարի: Լսարանը բոլորովին ժողովրդական ընելու համար վաղ երեկոյ հրաւիրուած ենք նոր վարչութիւն մը ընտրելու՝ ազատ քուէներով, որպէսզի այս տարի աւելի օգտակար և պողպալից շրջան մը բորբոնք: Երթանք այս գիշեր, ընտրենք ու բանալք Լսարանը:

Շատ լաւատես ըլլալու հարկ չի կայ գուշակելու համար թէ այս շրջանը նախորդէն աւելի եռանդուն ու գործունէաց շրջան մը պիտի ըլլայ նիւ Եօրքի գաղութականութեան համար: Դերասանական խումբ, ներկայացուցիչներ և շարաթագիտութիւն տեղ թերեւս կ'առաջարկութեան մը, Օրերը գոգոցած են շրջանը ըսկած է. գործի սկիզբը:

ՕՐՈՒՍՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Պողոտութեան սպիտակաթեւ և սիրուն ազաւնին արդէն շատոնց է որ թաւած է Մ. Նահանգներու ու Ըսպանիոյ վրայ: Անգղի թնդանութիւնը գոռացող բերաններով իօսեցան քանի մը ամիսներ այս երկու ազգերը իրարու հետ, իսկ հիմակ ալ երկու կողմէն դիւանագէտներու արձագրութիւնները պիտի խօսին:

Թնդանութիւնն տարած յաղթութիւնները լեզուն, գրիչն ու մեկնը պիտի վաւերացնեն. երկու ազգերու խաղաղութեան պատգամաւորները Փարիզի մէջ պիտի վաւերացնեն Գիւպայի ամայի դաշտերուն մէջ մըլուսած ճակատամարտները:

Այսպէս է. թնդանութիւնը ծեռք կը բերէ ճշմարտութիւնը, իսկ գրիչը կը նուիրագործէ գայն:

Պատերազմի արժիւր արագաթը ունի կը սրանայ աշխարհէ աշխարհ այս վերջին տարիները. հիմակ ալ Չինաստանի յախտեանկան կայսրութեան վրայ կը սաւառնի: Չինաստանի ջուրերուն վրայ երկու մեծակզօր նաւատորմիղներ իրարու բախդելու ամենաստիկալի վախը կայ շատ մօտերս. հարկ չը կայ ըսելու թէ Ռուսիոյ և Անգղիոյ բախդումը տեղեւորական հրդեհի մը սկզբնաւորութիւնը պիտի ըլլայ: Տէրութիւններու կռուածարկները Սուրբանի փաթթոնց ու Չինաց կայսեր հողաթափներն էին. Համիտը փաթթոնց վիւհելի տակը պահեց. Չարը և Թագուհին հողաթափներուն վաղեցին. Երկնային կայսրը տեսաւ վտանգը ու ամենէն նուրբ խաղը խաղաց. կայ-

սերական մուճակները կնկան մը ոտքը անցուց: Չինաց կայսրը հրաժարած է երկնային գահէն, ու հիմակ անոր վրայ կը բազմի Չինուհի մը: Վիքթորիա Թագուհին թագակից քուրիկ մը ունենալու աչքը չի վերցնիր. իսկ երիտասարդ Չարը հմայուած է դեղնագոյն կայսրուհիով, ու հրամայած է որ 10.000 Մոսքովներ երթան ու պաշտպանեն Բեքինի մէջ անկէն ալ հրամայած է որ անգլիական մարտանաւները դիմաւորեն Ռուսական փոխադրանաւները ու արգիլեն Չարի զինուորներուն Չինաց մայրաքաղաքը հասնելը:

Ինչ որ պիտի ըլլար շուտ ըլլար. երկու կարճ տարիներ կան այս դարը վերջանալուն. լաւ կըլլայ որ որչափ արիւնահեղութիւններ պիտի կատարուին այս արիւնահոտ դարուն վերջին օրերուն մէջ ըլլան, որպէսզի 20րդ դարն ալ չաղտոտուի: Թ. Չ.

ԼՈՒՐԵՐ

Վիէնայէ եկած կէս պաշտօնական լուր մը կըսէ թէ Թուրք կառավարութիւնն եթէ տէրութեանց պահանջներուն գոհացուցիչ պատասխան չի տայ Կրէտէի խնդրոյ մասին, որ պէտք է արուի մինչև Հոկտ. 15, ապա Թուրքի կողմէն պիտի պաշարեն:

Ֆրանսական կառավարութիւնը երկար վարանումներէ վերջ, որոնց Տրէյֆուսի դատը վերաքննել, Հասարակաց կարծիքը երթալով կաճի ի նպաստ Սատանայի կղզւոյ աքսորականին: Ս. Պապը հրահանգած է իր Փարիզի ներկայացուցիչը յորդորել կաթոլիկ մամուլը շրջաբանալ նոյն դատի վերաքննութեան:

Սուտանէ եկած լրոց նայելով Գողղիա թերեւս իր պահանջներն ծախել Անգղիոյ: Անցեալ շարժում մազ մնաց որ ընդհարում մը տեղի ունենար երկու տէրութեանց զօրքերուն մէջ: Գողղիա կը պահանջէր զՉորջիտա՝ ըսելով թէ Չոր. Մարշանթ Անգլիականէն 13 օր առաջ հասած էր Հոն:

Նահանգիս Հասարակագիտականք իրենց կառավարչական ընտրելի անուանեցին Սանթիակոյի գիւցազուններէն զՏեղակալ Թէոտոր Ռուզվելթի:

Հավանայի սպանիական զօրքերը կը մերժեն հաւատալ Սպանիոյ պարտութեան և կակնկալին մնալ ուր որ են:

Սպանիական կառավարութիւնը խտրել բողոքած է Մովակալ Տուրի գրկուելիք յաւելական օգնութեանց դէմ: Ուաշինգթոնի կառավարութիւնը մտիկ չէ ըրած այս բողոքին:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԻՍԻ Հասցէն փոխուած է: Լրագրոյս նոր հասցէն է. 145 EAST 23rd ST., New York City.

ԱՂԳԵՐ

Յառաջիկայ կիրակի երեկոյ ժամը 7½ին ժողով մը տեղի պիտի ունենայի Չինի քօրնըր Հօլ, Թիւ 57 Ուէսթ 25րդ փողոց, ուր ժողովրդէն յանձնարուած մը պիտի ընտրուի Լսարանը շարունակելու համար: Երգեր պիտի երգուին ու ատենախօսութիւններ ալ պիտի ըլլան: Ամէն հայ հրաւիրեալ է ներկայ գտնուիլ:

Ի դիմաց Ազատ Լսարանի վարչ. Հ. Գ. ՄԱՐԿՈՍԵԱՆ Ատենադպիր

Յառաջիկայ կիրակի, Հոկտ. 2, կէս օրէ վերջ ժամը Չին տեղի պիտի ունենայ Ուէսթ Հոպսքընի մէջ Ազգ. Լսարանի ժողովը Սրվոյ փողոցի արահին մէջ. պիտի խօսի Տիար Մ. Մարգարեան (Յրէզնոյէն) լուրեր ու տեղեկութիւններ տալով Գալիֆօրնիոյ վրայ: Հակաճառութիւն մը պիտի ըլլայ ամուսնութեան վրայ, որուն մէջ մաս պիտի առնեն Տիարք Գամպուրեան, Թօփալեան, Սարաճեան և Չօրպաճեան: Պ. Տ. Թոնամեան գրաւոր ճառ մը պիտի խօսի:

ԵՐԿՆԱՅԻՆ ԼՈՅՍԵՐ

Գրեց Պատ. Յարութիւն Ֆիլեան Այս քարոզապրէն ունենալ փափաքողները կրնան մէյմէկ օրինակ ձրի ստանալ դիմելով վարը գրուած հասցէին: Ուրիշ քաղաքներէ դիմում ընողներն պարտին 6 սենթի ըսթէմը զրկել ծախուց համար: 50 Մ. Չամալեան, 400 4րդ ալիւ, Նիւ Եօրք

ԱՐԺ. Պատ. Հ. Ս. Պարնըմ «Աւետարներ» խմբագիրը խօսուցած է առաջիկայ կիրակի (Հոկ. 2) առաւօտ ժամը 11ին քարոզել քաղաքիս Հայ Աւետ. եկեղեցւոյ մասուսին մէջ: Կ'արժէ գոնէ անգամ մը տեսնել ծեռունի խմբագիրը, որ Հայ գրականութեան զարգացման համար երկար տարիներ աշխատած է: Պարագային յարմար բացառիկ երգեցողութիւն ալ պիտի ունենանք: Սիրով կը հրաւիրուի ամեն Հայ այս պատեհութիւնը վայելել:

ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԾՆՇԱՐԱՆ

ՅԱԿՈՒԹ ԹԳԹԳԵԱՆ ԵՒ Պ. ԵՐԱՐԵԱՆ 210 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եօրք Երկու ընկերներն ալ արհեստով խոհարար ըլլալով, կը վստահացնեն ժողովուրդը թէ պիտի կրնան կատարելագոյն գոհ ընել իրենց յաճախողները: Հոս պօրտ չի կայ, վասնզի սովորական գներով պօրտ պահող ճաշարան մը, մեր համոզումն է թէ թարմ միս ու ընտիր նպարներ չէ կարող գործածել: Կերակուրի մէն մի պնակը կարծէ 10 սենթ միայն. \$3.50ի թիքէթը կարծէ 3 տոլար: Փորձեցէք միանգամ այս նոր ճաշարանին արժէքը հասկնալու համար:



—Ուսթրիի Հայք յանձնախումբ մը ընտրեցին անցեալ Կիրակի օր մասնաւոր ժողովի մը մէջ, Չէյթուսի ինպատու հանգանակութիւն մը ընելու պաշտօնով:

Վերջի պահուստ Երեւանի կը լըսենք թէ անցեալ Կիրակի տեղւոյն Հայք յատուկ ժողովի մը մէջ հանգանակութիւն բանալով Չէյթուսի համար 70 տարւոր հանգանակներ ու 3 անձերէ բաղկացեալ յանձնախումբ մը ընտրուի են նոյնը շարունակելու համար: Մեր թղթակիցը կը կարծէ թէ հանգանակութիւնն պիտի կրնայ 200 տարւոր հասնիլ:

ԱՐՓԻԱՐԻ ԽՆԴԻՐ  
ՄՍՏԵՒՈՉ

Իրողութեանց դէմ աչքերնին գոցողներ շատ կան որոնց միակ փաստը «Պատուհանն անդին չանցնիր»: Չէի կարծեր թէ Պ. Կ. Յ. փառապան ալ այս դասին կը վերաբերէր, սակայն Տիգրանի մէջ «Դրօշակ զրպարտի» մէջ խորագրով յօդուածը այդ կ'պատուցանէ:

Մենք Արփիարի քոսն տարուայ ընթացքը քննելու ժամանակ չունինք. ներկային մէջ զինքը ճանչընանք:

Կերևի թէ ոմանք տակաւին չեն համոզուած կամ չեն ուզեր համոզուիլ Արփիարի մասին: Լինելուն: ուրեմն բանաք վարագործի մէջ ճոխը:

Մէկդի թողունք Դաշակցականներու աստուածները. մոռնանք Պետրոս Տոնապետանի գրածները. չը յիշենք ձանկիւլանի Դիմակառնները. Թափառիկի ըսածներուն ուշադրութիւն անգամ չը տանք, միայն ձեռքերնիս անենք Մարտի — Արփիարի հրատարակած օրկանը — և տեսնենք թէ կը մասնէ:

Մարտի մէջ Արփիար Մէրսիի բանարկեայններու մասին այսպէս կը գրէր «Տեղական իշխանութիւնը կասկածանքներով կը ձերբակալէ... գործէն բնաւ տեղեկութիւն չունեցողներն... Հասկանալի այս անկեղծ յայտարարութեան տեղական իշխանութիւն կը շարունակէ ձերբակալել, բանարկել և տանջել բազմաթիւ Հայեր որոնք բնաւ ո'չ հեռուէն և ո'չ մօտէն յարաբերութիւն ունեցած են կուսակցութեան հետ»: (Մարտի 8):

Նոյն թւոյն մէջ Հնչակեան կուսակցութիւնը «Ինքնապաշտպանութեան հաւաքական մարմին» կանուանէ և կը յաւելու, «Հնչակեան կուսակցութեան ծրագիրն է պարզապէս դիւրացնել Հայ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը»: (տես Մարտի 30):

Այժմ վերցնենք Մարտի 10 թիւը: Հոն ալ այսպէս կըսէ, «Մենք պարտաւոր ենք ազգովին պաշտպանել Մերսիի ձերբակալեալները, որոնք սկզբունք մը կը ներկայացնեն — Հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան իրաւունքը»:

Այ կասկած կայ մասնութեան: Մերսիի բանարկեայններ թիւ 8ը «Մարտի» մէջ «ոչ հեռուէն և ո'չ մօտէն» յարաբերութիւն ունէին Հնչակեանց հետ, ինչ որ ճշմարտութիւն է: Իսկ թիւ 10ի մէջ Հնչակեան «ներկայացուցչներ» կը գտնան այդ անմեղները. — Աս ալ մասնութիւն է:

Այլևս դժուար մէնտներու կամ պատուոյ աստեանի պէտք կը մնայ: Եթէ կուզէք ձեր օրգանի դէմ դատ բացէք, Պ. փառապան, և ինչու մասնեցը կը լուծուի:

Ցտեսութիւն  
Ա. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

ՈՍՄԻ ԶԸ ՀԱՌԿՑՈՂՆԵՐՈՒՆ

Թիւ 44 ՏԻԳՐԱՆԻ մէջ կարգացի Դաշակցականի մը պատասխանը Արփիարի խնդրոյն առթիւ փառապանի գրած յօդուածին, ՏԻԳՐԱՆԻ 42րդ թիւոյն մէջ: Դաշակցականը մտային ինչ գաղափարներու մէջ երազած է անտեղի յարձակումներով խճճել ժողովրդի օրտին թարգման և անոր գաղափարին ճշգրիտ արտայայտչն եղող անկողմնակալ յօդուածը. զայն խեղաթիւրուածներով քննադատել ճշմարտութեան ճակտին մուր քսելու չափ ոճիր մ'է:

Դաշակցականը կըսէ թէ Հնչակեանները երբ պատուոյ առեան կազմեցին ուրիշ խոյս տուին Դաշակցականը: Կերևի թէ Ալաքայէ նոր վերագործողներուն անցեալի պատմութիւնը ընել հարկ է: Արփիարի խնդրը ընդհանրական ըլլալէ առաջ անհատական էր և կարծեմ իր օմանակին, եթէ չեմ սխալի 95 ինչ էր որ Արփիար կազմեց պատուոյ աստեան Պօլսոյ մէջ, և յանձն առաւ դատուիլ Պատրիարքարանի մէջ. ուր մնացին ամբաստանող պարոնները. ուր մնաց Պօլսոյ «Վստահելի» կօմիտէն, որուն անկեղծութեան վրայ վստահելով դաւածան մը կը ճանչընաք Հայ երիտասարդութեան մտաւորականի ու բարոյականի անման ձգտող «Հայրենիք» ի խմբագիրը: Կաղաչեմ, լուռ մի մնաք, ըսէք ինչու ձեր վստահելի ու անկեղծները ճակատաբաց չըսին, «Արփիար, մասնիչ մը ես. ահա մեր փաստերը և տօքուածները»: Իսկ գալով ներկային, երբ Արփիարի խնդրը ընդհանրական օրոտան խնդրը դարձած է, ո'չ Հնչակեան և ո'չ Դաշակցական ընկերող մը կողմէ կըսած ու է գիտողութիւն իր նշանակութիւնը ունի երբ մեծամասնութիւնը Զաքարիայի պապանցումին մէջ է:

Հնչակ. կուսակցութեան օրկանը «Մարտ» իր գոյութեան օրէն իվեր անդադար պատուոյ աստեան կը պօսայ, միթէ ձեր հաւանութեամբ է որ կը լուէ «Դրօշակ»:

Դաշակցականը կըսէ թէ Մարտի չափով կը չափենք Դրօշակը. չէ, այդ պատիւը մենք չենք ընել Դրօշակին. անհուն տարբերութիւն մը կայ անոնց մէջ. ահա թէ ինչու Մարտի մէջ հրատարակուելէք ունէ գրութիւն պէտք է շահած ըլլայ վարչութեան անգամոց մեծամասնութեան քուէն. կը տեսնէք որ Մարտը մեր կուսակցութեան գաղափարներու արտայայտիչն է: Իսկ դուք որ սպակեդրոնացումով կը կոտավարուիք իր թէ, գիտէք ինչ կը գրուի Դրօշակի մէջ, քանի որ անոր խմբագիրները վարձակներն են:

Հնչակեաններու պատուոյ աստեանի պահանջին առջև երբ Դաշակցականները կը լուեն, մենք իրաւունք չունինք ըսելու թէ ո'չ թէ մինչև Ալաքայէ փախուստ կուտաք, այլ Ալաքայէն ալ անդին ստանամանեաց երկիրը: Ապագան թող ջոյց տայ: Լօրէնս. Կ. ՄԻՆԱՍԵԱՆ

Մ Ա Ն Ի Ր Ա Ն Ո Ւ Ր Գ

Բիւզանդիոնի մէջ կը կարգանք թէ Սուլթանը իր գահակալութեան տարեգարծին առթիւ իրատէ մը հանած է, որպէսզի յաւելում մը ըլլայ Ազգ. Հիւանդանոցին և նմին յարակից օրբանոցին տրուած պետական Հացի ու միւս ամենօրեայ պարէնին վրայ: Օրական 51 օխս միւր 150 օխայի և 340 օխս հացը 600 օխայի բարձրացած է:

Պոզաւոր սուլտան... Անցեալ Երարթ երեկոյ Ե. Բ. Ընկերակցութեան Հայ խմբի ժողո-

վին խօսեցաւ Տքթ. Գարրիէլեան իրեն նիւթ ունենալով «Ֆիզիքական առողջութիւն»: Ունիդիրքը ընդհանրապէս գոհ մնացին, բայց շատեր զարմանք ու զայրոյթ ցոյց տուին երբ, ի ներկայութեան գեղեցիկ սեռին բժիշկ ատենախօսը մանկարարձութեան վերաբերեալ կարգ մը օրինակներ ու բացատրութիւններ մէջ բերաւ:

—Յօլ Բիվրէ կը գրեն. «Տեղւոյն Դրադարանի Միութեան պաշտօնէից վեցամսեայ շրջանը լրացած ըլլալով անցեալ Կիրակի անդամական ժողով մը տեղի ունեցաւ ու գաղտնի քուէարկութեամբ հետեւեալ նոր պաշտօնեայք ընտրուեցան: Տքթ. Ս. Տօնապետեան գրապահ, Մ. Պոլսեան գրական հաւաքչ և Մ. Պապեան գանձապահ:

—Լինէն կը գրեն թէ Սեպ. 17ի Կիրակի երեկոյ Սարգիս Ասլանեան տեղւոյն Լիպըթի փողոցէն անցած ժամանակ, մութ անկիւնէ մը երկու Հայեր Ուաչօ և Յովհաննէս Մակարեան իր վրայ կը յարձակին ու անխնայ գանակոծել կոկորն: Ասլանեանի ազդակներն ոտտիկան մը կը բերեն, որ ձերբակալելով Մակարեան եղբայրները կայարան կը տանի. սոքա ազատ կարճակուն նրաշխարհութեան տակ Սեպ. 20ին դատուելու համար:

—Ճամբորդներ կը պատմեն թէ Տիգրանակերտի մէջ շարաթներ առաջ, նոր յուզում մը պատճառաւ, տեղւոյն Հայերը տասն և հինգ օր իրենց խանութները գոց թողուցած են՝ տուններուն մէջ ապաստանած մընալու համար:

—Անցեալ շաբաթ երեկոյ քաղաքիս Հայ երիտասարդաց Թանգարանի Միութիւնը 20ի չափ անդամներու ներկայութեամբ ընտրութիւն կատարեց: Նոր շրջանի համար 12 քուէով ատենապետ ընտրուեցաւ Տիգր. Ա. Լէոն, ատենադպիր՝ Տ. Գամպուրեան, գանձապահ՝ Պ. Չանդակեան, Թանգարանագետ՝ Տ. Պոյաճեան ևն.: Հին պաշտօնեաներն, որք Միութիւնն իր անկեալ վիճակէն ներկայ բարձրութեան հասուցեր էին (.) շատ յոգնած ըլլալով պաշտօններն նորոգուտալ կու գէին... առերես:

—Փաթըրսնի մեր թղթակիցը կը գրէ. «Ամսոյս 24ին մեծ իրարանցումով դիմաւորուեցան քաղաքիս կամաւորներն, որոց մէջ էին մեր շորս հայրենակիցներն Տիգր. Գեորգ և Պետրոս Չանդակեան, Գեորգ Թաքազեան և Տիգրան Պէշկէօթուրեան: Այս վերջինն թայֆօրէ ֆիվըրէ բռնուած ըլլալով՝ ակար էր տակալին: Տեղւոյն գաղթականութիւնը Կիրակի երեկոյ ինձոյք մը տուաւ ի պատիւ մեր կամաւորներուն: Հանգիստին ներկայ էին 100ի չափ երկսեռ ազգայինք: Երգուեցան ազգային երգեր, ու Տ. Յ. Յ. հակիրճ ճառով բարի գալուստ մաղթեց Հայ զինուորներուն»:

—Քաղաքիս Հայ դերասանական խումբը հետեւեալ պաշտօնեաներ ընտրեց. Թ. Չ. ասենապետ, Հայկ Աստուածատուրեան ատենադպիր, Հայկ Սանոսեան գանձապետ, Յ. Մ. Սիրականեան՝ խմբագետ և Մ. Մինասեան՝ օգնական:

—Տ. Մ. Թ. կը գրէ Պոլսեանէն թէ վերջի շաբաթներու տեղւոյն որբախնամները մեծ ջանք կընեն կորիկ գուժար մը գոյացնելու. անցեալներն հանդէսի մը մէջ ծաղիկ վաճառած են այս նպատակաւ. Պոսթոնէն պարոն մը \$2.75 վճարած փոքրիկ է մը համար: Անցեալ Կիրակի օր ալ ասոնք պտուղ վաճառած են որբերու համար. վճարուած բարձրագոյն գինն մէկ պտուղի համար եղած է \$1.65: Նորմիջոց լաւ միջոց:

S. & N. D. MERHIGE & Co.

92 WASHINGTON ST., NEW YORK.

Վ. Ա. Ճ. Ա. Ռ. Ա. Կ. Ա. Ե. Բ.

Հին և նոր ամէն տեսակ գէնքերու, Գաղղիական գոհարեղէններու թէ՛ իրական և թէ՛ նմանութիւն: Կը վաճառեն տրեւիտան և սաճիկական ամէն տեսակ անգլիագործեր, սեղանի, դաշնակի, մէնթըլի ևն. ծածկոյններ օսկեթել և մետաքսահար: Գամառի մետաքսէ և մանածէ վարադոյններ, Հալէպի աղապանի, քէֆիաներ ևն. Հայ անհատներ ինչպէս նաև Հայ խանութպաններ ու վաճառականներ երբ պէտք ունենան այս կարգի ապրանքներու, 10 առ 100 շահելէ գատ, գոհ պիտի մնան այս ծանօթ վաճառատուէն գնելով: Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք ճշտիւ կը կատարուին:

ՊՈՒԼՂՈՒՐ-ՊՈՒԼՂՈՒՐ-ՊՈՒԼՂՈՒՐ  
ՊԱՂՏԱՍՍԱՐ ԹԱՇՃԱՆԵՒԻ ԸՆԿ.  
B. TASHJIAN & Co.,  
53 MAIN ST., BANGS COURT,  
WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն արգոյ հասարակութեան թէ իրենց փայտի գործը յաջողցնելէ վերջ՝ հաստատած երկրորդ պարտքի և ծնած զործարան մը վերայիչեալ անուան տակ: Այս գործարանի մէջ պատրաստուած ապրանքներն ոչ միայն գերազանցելի զինքն կը վաճառուին, այլ և մարտուոն ու տեսակի կոյով անհամեմատելի արիւնքն:

Կանոնադրութեան համար խոշոր մանր պուլգուր փառանոր կարծ սկնթի, իսկ անուանուած համար սկնթի: Տոնակու և ճաշարաններ համար զիւրաթիւն տարու նպատակը որոշուած է մինչև 25 փոտուոն ակութեամբ ապրանք վաճառելու: Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք փութով և ճշտիւ կը կատարուին:

ՊՈՒԼՂՈՒՐԻ ՄԻՆԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹ.  
BULGUR MANUFACTURING CO.,  
151 Union St, WORCESTER, MASS.

Կը ծանուցանեն թէ երկարատև փորձառութեան շնորհիւ իրենց շինած պուլգուրը մեծ ընդունելութիւն գըտած է ամէն տեղ: Առանց քարի և անախորժ հողի Պուլգուրը ամէն Հայ տունէ կը փնտուուի: Մենք, որ միակ Պուլգուրի գործարանն ունինք այս քաղաքի մէջ, մեր բոլոր ժամանակը տուած ենք անոր յաջողութեան համար: Մեր յաճախորդք եթէ գոհ չի լինին մեր ապրանքներէն գրամին ետ կը տրուի թէ և ցայսօր ոչ մի Հայ տեղագութիւն յայտնած է: Մեզ համար կը վկայեն Հայ տիկիները:

Պուլգուրի լիպրան կարծէ 35 սկնթի խանութներու և ճաշարաններու համար. իսկ տուններու համար 4 սկնթի: Յանձնարարութիւն ճշտիւ կը կատարուին: Փախադրութեան ծախքը գընողին վրայ է:

Յ. Մ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ,  
Ա. Ռ. Ա. Ջ. Ա. Կ. Ա. Ր. Գ. Դ. Ե. Բ. Չ. Ա. Կ.

Թիւ 628 Յրդ Աջիւ, Նիւ Եորք:  
ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Ընտիր կերպասեղէններէ վայելուչ հագուստներ կը շինէ դիւրաբաւառելի գիններով:

ԳՐԱՐՁԵԱԼ ԿՈՒՒԻ

Պոսթօնէն առնուած նամակներ կը պատմեն ի՞նչ Գասպար քահանան նրա թական անձկութենէ ազատելու համար կառավարիկն իրեն Պատարագ մը ընել: Տէրտէրը կը համակերպի տեղւոյն Ս. Պողոս եկեղեցին առնելու համար դիմում կը լրացայ Եպիսկոպոսականաց, որոց հովիւը քահանայի վկայականը տեսնել կուզէ: Տէր Գասպար վկայական չունէր: Հետեւեալ օր վաղիկնակ վարդապետն Պոսթօն գրնացած ըլլալով կը վկայէ քահանայի մասին, ու եկեղեցին կը արուի անցեալ Կիրակիի համար: Վաղիկնակ վարդապետ կը խրատէ Հայերն սիրաշահիլ քահանան, որ խեղճ ու կրակ մէկի մը երևոյթն ունի: «Տէր պապան որ դաւառարարար կը խօսի, յանկարծակիի գալու պէս կը լսէ սիրաշահիկն, որ ըստ իւր կարծեաց իշխանական բառ մըն էր, ու կը մերժէ Կիրակի օրը Պատարագ մատուցանել, ու ո՛ր և է մարդու իշխանութեան տակ մտնել»: Մեծ դժուարութեամբ կը տակնորոն տէրտէրը: Վաղիկնակ վարդապետ հետեւեալ օրը Փրօվիտէնէն վէճ մը քար և ուրիշ կարեւոր բաներ կը դրկէ առանձին նամակով մը, որով նոյն յորդորները կընէ ժողովրդին տէր պապան նորէն կը մերժէ պատարագել: և այսպէս քանիցս մերժելէ և ընդունելէ յետոյ՝ Շաբաթ օր Հայք, օտարաց առջև ամօթով չի մնալու համար, վաղիկնակ վարդապետն հեռաձայնով կը կանչեն պատարագելու համար: Կիրակի օր քահանան չի սպասաւորեր անգամ, այլ կը բաւականանայ Աւետարանը միայն կարդալով:

«Եկեղեցւոյ աւարտումէն ետքը, կը գրէ թղթակից մը, երբ Հայր Սուրբը ու տէր Հայրը ճաշարան կը վերադառնան, ճաշարանապետ Ս. կը յանդիմանէ տէր տէրը շապիկ չի հագնելուն համար, ու խաչագող կոչելով զանիկա՛ դռնէն գուրս կը վռնէ: Հազար թէ մի քանի անձանց միջամտութեամբ քահանան իր տեղը կը նստի, Ս. ին եղբայրը վրայ հասնելով՝ տէր Հոր օձիքէն կը քաշէ ու գուրս կընէ զայն անուրը հայհոյութիւններով: Մտաւկայ ուրիշ ճաշարանի մը մէջ գանուող ազգայինք այս ցաւալի իրողութիւնն իմանալով՝ կորչեն ինքիբը ստուգել նոյն իսկ Տ. Վաղիկնակ վարդապետէն որ ակննատես ու անխօս վկայ եղած էր իր հոգեւոր եղբոր դէմ կատարուած նախատելի վարմանց:»

«Հայր սուրբը բացատրութիւն տալու համար հոն հասնելով՝ կրօնական պաշտամանց մասին քահանային ընթացքը անոր «Խելքի պակասութեան» կը վերագրէ, իսկ անոր կրած անարգանաց մասին եղած հարցմանց «ո՛չ, զաւանկերս, այգպէս բան չի կայ» կը պատասխանէ՝ ձեռքը կուծքին վրայ դնելով: Ներկայից մէջէն Ն. Թ. այդ բանին չի հանդուրժեր, և վերաւորիչ ակնարկութիւններով կը մեղադրէ Հայր սուրբը, որ ի սկզբան համբերութիւն ցոյց կուտայ, բայց յետոյ Ն. Թ. ի ոսկորները կտորտել կըսպաննայ՝ իւր հուժկու բազուկները ցոյց տալով անոր:»

Հայր—Տէր Հայր, գործս գէշ կերթայ, ինչ ընեմ:  
Տէրտէրը—Օրհնած, իմ օձիքէն վազ անցիր: Ես իմ տէրտես մէջ կայրիմ արդէն: Պատուելիին գնա:  
Պատուելին— Մարդ Աստուծոյ, ինչ յուսահատած ես: Իմ օրինակիս հետեւ և կը յաջողիս անպատճառ:  
Հայր—Բո՛ւհ, ինչ ընեմ:  
Պատ.—Պատ. Ծիւղանի գիրքը կարդա՛, լուսաւորուէ և հեղինակին պէս Աստուծոյ հետ օրթախ եղիր:  
ՍՈՒԻՆ

ՊՕՍԵՐՈՒ ՔՄ ՀԱՃՈՅՔԷՆ ԱԶԱՏ

Եղբայրնիս Հայրենիք երթալուն համար մեր երկու կողակարի խանութներէն (րիփէրիկ) մին վաճառել կուզենք դիւրամատչելի գնով, արհեստին անտեղեակներուն սորվեցնելու պայմանաւ: Մանրամասնութեանց համար դիմել:

ԲԱՐԵՁԱՆՆԱՆ, ԵՂԲԱՐԲ  
706 Shawmut Ave., Boston, Mass.

ԹԱՇՃԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հ Ա Ց Ա Ք Ո Ր Ծ Ե Ի Մ Ս Ա Վ Ա Ճ Ա Ռ  
573-579 ԲԵՅՄՊՐԻՃ ԸՍԹՐԻԹ  
ԲԵՅՄՊՐԻՃ, ՄՍՍՍ.

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ իւր պատրաստած հացը թէ՛ գնի և թէ՛ տեսակի մասին չէ կարելի գերազանցել: Ո՛չ կը փշրի և ոչ ալ թթու է: 1 փնտ. հացը 3 սենթ միայն կարծէ: Միւր միւր թարմ է ու գնեքը գոհացուցիչ: Կը՛վաճառէ նաև անուխ, քարիւղ և Վառելիք փայտ: Ունի առանձին ճաշարան մը կցած յիշեալ ճիւղերուն, ուր կը պատրաստուին ընտիր կերակուրներ. առատ և աժան: Մասնաւոր կտրք ունի փոխադրելու համար, խիստ աժան գնով: Փորձեցէք անգամ մը:


MARK C. MEAGH

St. Paul Building, No. 220 Broadway, New York City.  
ՀՈՍՏՍՏՈՒՆ ԿԱԼՈՒԱՍ ՄԵՏԱԳՈՅՆ ՆԻՒ ԵՈՐԲԻ ՄԷՋ

Շարժական Իւր վճարելով \$1.00 միայն Մէկ սուրճի տեղ ի Սուրբ Հիլ Փարք, որ Մեծագոյն Նիւ Եորքի յայտնագործական կեդրոնն է Ֆլըշինկի կից: Ար տեղը ծովի մակերևոյթէն 120 ոտք բարձրութիւն ունի, ուր 34րդ փողոցի ֆէրրիէն Հինգ սենթով կերթցուի 19 րոպէէն:

Այս Հողերը տեսնել փափաքողներուն երթեկութեան համար ձրի տոմս կը տրուի: Երթալու ուղղներն ամեն Հինգ-շաբթի և Կիրակի օրեր, կէս օրէ վերջ ժամը մէկ ու կէսին, ներկայ գտնուելու են Լօնկ Ասոյլընտի ֆէրրիին տաղև, իսկ 34րդ փողոց, ուր պիտի կրնան տոմս ստանալ Տ. Ս. Եարարմանէ, որոյ հասցէն է 298 Ուէսթ 12րդ փողոց:

\*\*\*  
Բնակութեան համար վարք մընէ Փարք, որուն գերնականաբար պիտի եթէ մի անգամ այս վայր: Կան սարակաց ու անրոցներ, եկեղեցի-  
\*\*\*



ԾԱԽՈՒ ԱՐՄՈՒԹ

Յակոբ Յարութիւնեան ծախու ընտիր արմոնիք մ'ունի, զոր կը փափաքի վաճառել չափաւոր գնով մը: Գնել ուղղողներն դիմեն կամ գրեն առ Յ. Յարութիւնեան, 285 Տին փողոց, Փրօվիտէնս, Բ. Ա.

ԹԱՇՃՈՒ ՓԱՓԱՋԵԱՌ

NO-242 SPRING ST., New York City.  
Հայկական ճաշարան  
Նաւահանգիստներուն մօտ լինելով, ուրիշ քաղաքներէ եկող ազգայնոց կրնայ դիւրութիւններ տալ: 48

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ


Այս տպարանի մէջ կը տպագրուին թէ՛ Հայերէն և թէ՛ Անգղիերէն լեզուաւ ամեն տեսակ այցեւորում, նամակագրութիւն, հրատարակիչ, շրջաբերականներ, տետրակներ ևն: Մեր գները գոհացուցիչ են. տպագրութիւնն՝ մաքուր: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք կը կատարուին փութով ու խնամով:

ՊԵՏՐՈՍ ՎԱՐՃԱՊԵՏԵԱՆ ԵՒ ԵՈՎ-Հ Ա Ն Ն Է Ս Փ Ա Ս Բ Ա Լ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ  
Թիւ 154 Իսթ 27րդ փողոց, Նիւ Եորք  
Նոր Կարգադրութիւն, Նոր Վարչութիւն և Նոր Ճաշարան  
Պատիւ ունի ծանուցանել հասարակութեան թէ ամսոյս 7էն սկսեալ գնած ու բողբոջի կերպարանափոխ րրած են այս ճաշարանն՝ ներքին վարչութեան տեսակաւ: Խոհարարութիւնն, մաքրութիւնն, գործածուած թարմ մսի և նպարեղէններու տեսակն վստահ են թէ պիտի գնահատուի ընդհանուր ժողովրդէն: Բայց վստահ ըլլալու համար թէ ամեն ինչ առաջնակարգ և գոհացուցիչ է այս ճաշարանի մէջ, կը հրաւիրուին ազգայինք փորձել գէթ մի անգամ:

ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ

Ա. Պետոյեան կը ծանուցանէ թէ իր Մօլտընի մէջ ունեցած գործը պիտի վաճառէ Հայրենիք վերադառնալ որոշած ըլլալուն համար: Իր վաճառելիք ապրանքներն են նպարեղէններ, շաքարեղէններ, ծխախոտ, փուռ մը, ճաշարան մը, ձի մը և երկու կառք: Բաւական ամերիկացի յաճախողներ ունի այս գործը:  
Դիմել 38 Մէնթըր Ըսթրիթ, Մօլտըն, Մասս.



Ա. ԹՕՓՈՒՋԵԱՆ.

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ,  
Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք

Այս խանութին մէջ կը վաճառուին ամէն տեսակ կոշիկներ խիստ աժան գներով: Մեր Հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք: Նոր ապարուած կոշիկներ կը կարենք ձեռնոր եւ վայելուչ կերպով: Կը նորոգենք հին կոշիկներ չափաւոր գներով: Ուրիշի մը երթալէ յառաջ ինձ եկէք անգամ մը. եւ վստահ եղիք որ շատ գոհ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց Արանց կոշիկներ \$1.25է մինչև \$5.00 Կանանց « \$1.25է « \$2.50 Տղայոց և աղջկանց կոշիկներ \$0.50է « \$1.50

Հ Ի Ր Զ Օ Լ Ա

ՄԱՋԻ ԴԵՂ



Կը գորայնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը:  
Միանգամ փորձել բաւական է սաղմունի և սաղմունի զիտանալու համար, որ արևելեան խոտեղէ պատրաստուած է յոյժ հաճելի միջոցով:  
Կը ծախուի րոտըր գեղադործներուն քով:  
Կրն 50 Մէնթ միայն:

Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ ընկերութենէն:  
Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարականի քով, թիւ 45 Էքսչէնճ Ըսթրիթ, Ուսթըր, Մասս:



AMIN MERHIGE & Co.  
29 BROADWAY, NEW YORK, Room 212  
ՄԵՏԱԳՈՅՆ (Հօրէլ) ՎԱՃԱՌԱԿԱՆԻՔ  
Արևելեան և Տաճկական Ապրանք  
Այս վաճառատանն իր տեսակին մէջ ամենամեծն է ինչու ետքը: Հոն կը վաճառուին ամեն տեսակ անգղեզ գործեր, սեղանի, մէնթըլի, փիտանոյի ևն. մետաքսայ և սակեթել ծածկողներ, Գամաշիկի վարագոյրներ, Բերկայի աղապանի, քէֆի, ևն. ևն:  
Հայ վաճառականը կը հրաւիրուին փորձել միանգամ: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին: Գրեկներ չափաւոր և ապրանքներն լուսագոյն լինելով՝ ուրիշ ո՛ր և է տուն չէ կարող մրցիլ այս տան հետ: